

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ**

Արձանագրություն թիվ 7
12.03.2020 թ.

1. ՀԱԱՀ 2019 թ. գործունեության արդյունքների և առաջիկա ծրագրերի վերաբերյալ.

Որոշեցին. Ընդունել ի գիտություն:

2. 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ՀԱԱՀ անվանական կրթաթոշակառուների հաստատման հարցի վերաբերյալ.

2.1. 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի համար հաստատել գիտական խորհրդի քննարկմանը ներկայացված անվանական կրթաթոշակառուներին.

Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի անվանական կրթաթոշակառուները.

1. Գրիգորյան Արման Ռազմիկի, ԳՄՍ 4-րդ կուրս՝ պրոֆեսոր Ս.Ս. Մահակյանի անվան
2. Բուդաղյան Մարիա Գրիգորի, ՃԵԿ 3-րդ կուրս՝ պրոֆեսոր Հ.Վ. Մաքսապետյանի անվան
3. Ասատրյան Արման Աշոտի, ՃԵԿ 4-րդ կուրս՝ ակադեմիկոս Ա.Ա. Մաթևոսյանի անվան
4. Առուստամյան Դիանա Կամոյի, ՀՇ 4-րդ կուրս՝ ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան
5. Գրիգորյան Լյովա Նորայրի, ՀԲ 3-րդ կուրս՝ Ա.Ղ. Խանջյանի անվան

Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի անվանական կրթաթոշակառուները.

1. Համբարձումյան Անահիտ Սլավիկի, ԱՔԽՏ 3-րդ կուրս՝ Վ.Թ. Թոթոմյանցի անվան
2. Դաջունց Սոնա Անուշավանի, ՖԻՆ 3-րդ կուրս՝ Բ.Գ. Մարտիրոսյանի անվան
3. Մարգարյան Մարիամ Հովհաննեսի, ԱԷԿ 4-րդ կուրս՝ Ա.Ե. Քոչինյանի անվան
4. Գասպարյան Այսա Սեդրակի, ՀՀ 4-րդ կուրս՝ Ա.Ն. Մարգարյանի անվան

Ագրոնոմիական ֆակուլտետի անվանական կրթաթոշակառուները.

1. Անդրիասյան Աշոտ Մարատի, ԱԷ 4-րդ կուրս՝ ակադեմիկոս Գ.Խ. Աղաջանյանի անվան
2. Կիրակոսյան Միքայել Հրաչյայի, ԱՏ 4-րդ կուրս՝ ակադեմիկոս Ա.Գ. Թումանյանի անվան

Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուժության ֆակուլտետի անվանական կրթաթոշակառուները.

1. Նիկոյան Կորյուն Արտաշեսի, ԳԿՍԳԿ 33-րդ կուրս՝ Ա.Զ. Թամամշևի անվան
2. Թումասյան Աննա Պետրոսի, ԱՄՓ 4-րդ կուրս՝ Ա.Ա. Ռուխիկյանի անվան

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի անվանական կրթաթոշակառուները.

1. Ղազարյան Սիրուշ Մայիսի, ՊՓ 4-րդ կուրս՝ պրոֆեսոր Ա.Խ. Դիլանյանի անվան
2. Կարապետյան Արթուր Լենիկի, ՊՓ 3-րդ կուրս՝ պրոֆեսոր Ա.Հ. Քալանթարի անվան
3. Դավեյան Վահե Սմբատի, ԳՏ 4-րդ կուրս՝ կոնյակագործ Մ.Ս. Սեդրակյանի անվան
4. Պողոսյան Ժենյա Մակիչի, ՊՏ 4-րդ կուրս՝ պրոֆեսոր Վ.Ե. Թախրովի անվան

2.2. Հանձնարարել ՏՏ կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին՝ գիտական խորհրդի կողմից հաստատված, նոր անվանակոչված անվանական կրթաթոշակների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրել համալսարանի կայքում:

3. ՀԱԱՀ հիմնադրամի կանոնակարգերի և կարգերի փոփոխության հարցի վերաբերյալ.

3.1. ՀԱԱՀ գիտական խորհուրդը միաձայն որոշեց հաստատել.

1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի կանոնակարգը և աշխատակարգը,

2. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի մագիստրատուրայի ընդունելության կարգը,

3. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական ստորաբաժանումներում ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման մասին կանոնակարգը,

4. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ուսումնական գործընթացի կառավարման վարչության կանոնակարգը,

5. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգը:

3.2. Հանձնարարել ՈԳԱ կենտրոնի տնօրեն Մ. Մովսիսյանին՝ ներկայացնել կոնկրետ առաջարկություններ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգի վերաբերյալ:

3.3. Հանձնարարել ՏՏ կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին՝ հաստատված կարգերն ու կանոնակարգերը տեղադրել համալսարանի կայքում:

4. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում 2020 թ. փետրվարի 11-ին հայտարարված մրցույթի անցկացման վերաբերյալ.

- ՀԱԱՀ համաճարակաբանության և մակաբուժաբանության ամբիոնի վարիչի թեկնածու Արթուր Ռոբերտի Մկրտչյանի օգտին գիտ. խորհրդի ներկա 50 անդամներից քվեարկել են 50-ը («կողմ»՝ 33, «դեմ»՝ 10, «անվավեր քվեաթերթիկներ»՝ 7): Համաճարակաբանության և մակաբուժաբանության ամբիոնի վարիչի թեկնածու Լիանա Գրիգորյանի օգտին գիտ. խորհրդի ներկա 50 անդամներից քվեարկել են 50-ը («կողմ»՝ 10, «դեմ»՝ 33, «անվավեր քվեաթերթիկներ»՝ 7): Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների հիման վրա Արթուր Ռոբերտի Մկրտչյան ընտրվել է ՀԱԱՀ համաճարակաբանության և մակաբուժաբանության ամբիոնի վարիչի պաշտոնում:

- ՀԱԱՀ հասարակական գիտությունների ամբիոնի վարիչի թեկնածու Համո Կարենի Սուքիասյանի օգտին գիտ. խորհրդի ներկա 50 անդամներից քվեարկել են 50-ը («կողմ»՝ 49, «դեմ»՝ 0, «անվավեր քվեաթերթիկներ»՝ 1): Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների հիման վրա Համո Կարենի Սուքիասյանն ընտրվել է ՀԱԱՀ հասարակական գիտությունների ամբիոնի վարիչի պաշտոնում:

5. Պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչում շնորհելու մրցույթի արդյունքների վերաբերյալ.

- ՀԱԱՀ գյուղատնտեսական կենդանիների մորֆոլոգիայի, ֆիզիոլոգիայի և ախտաբանական անատոմիայի ամբիոնի դոցենտ, անասնաբուժական գիտությունների դոկտոր Սուրիկ Խաչիկի Կոբեյանին շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում ԺՁ.00.02 «Կենդանիների ախտաբանություն, ուռուցքաբանություն և ձևակազմագիտություն» մասնագիտությամբ:

- ՀԱԱՀ ավտոտրակտորների և գյուղատնտեսական մեքենաների ամբիոնի ասիստենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Անի Անդրանիկի Մաթևոսյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում Ե.20.01-«Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում և մեքենաներ» մասնագիտությամբ:

- ՀԱԱՀ կենսաբանության և կենսատեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, կենսաբանական գիտությունների թեկնածու Ալլա Սամվելի Ալեքսանյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում Գ.00.05 - «Բուսաբանություն. սնկաբանություն. էկոլոգիա» մասնագիտությամբ:

- ՀԱԱՀ կենսաբանության և կենսատեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, անասնաբուժական գիտությունների թեկնածու Մարինե Վազգենի Վարդանյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում Գ.00.08 - «Կենդանաբանություն. մակաբուժաբանություն. էկոլոգիա» մասնագիտությամբ:

- ՀԱԱՀ ագրոբիոգենետի կառավարման և քաղաքականության ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Իլոնա Զավենի Ալեքսանյանին դոցենտի գիտական կոչում շնորհվել է դոցենտի գիտական կոչում Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

- ՀԱԱՀ ագրոբիոգենետի կառավարման և քաղաքականության ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Ալեյա Վալերիի Պողոսկայային շնորհվել է դոցենտի գիտական կոչում Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

- ՀԱԱՀ ագրարային էկոնոմիկայի ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Մերի Գագիկի Մանուչարյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

6. ՀԱԱՀ ուսումնական պլանների հաստատման վերաբերյալ.

Գիտական խորհուրդը միաձայն որոշեց հաստատել ՀԱԱՀ հետևյալ մասնագիտությունների բակալավրիատի ուսումնական պլանները.

1. Ագրոբիոգենետի և ֆինանսներ
2. Սննդամթերքի անվտանգություն

3. Պարենամթերքի տեխնոլոգիա
4. Ջերմատնային ագրոտեխնոլոգիա
5. Ագրարային համակարգի էկոնոմիկա
6. Կենդանագիտություն և կենսատեխնոլոգիա

7. Կրոնավիրուսի տարածման պայմաններում համալսարանների ուսումնական գործընթացի կազմակերպման միջազգային փորձի և արդիական ուղղությունների վերաբերյալ.

7.1. Հանձնարարել SS կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին և հեռակա ուսուցման դեպարտամենտի պետ Հ. Հարությունյանին, մշակել ու քննարկման ներկայացնել հեռավար, օնլայն ուսուցման անցում կատարելու ծրագիր՝ նշելով օգտագործվող համակարգերը, պլատֆորմները, դրանց ձեռք բերման և մեր պահանջներին համապատասխան տեղայնացման հնարավորությունները:

7.2. Հանձնարարել ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն Դ. Հայրապետյանին, SS կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին և իրավաբանական բաժնի պետ Ն. Եղիազարյանին վերլուծել օնլայն դիմումների ընդունման հնարավորությունը և սեղմ ժամկետում մշակել օնլայն դիմումների մոդել համալսարանի դիմորդների համար՝ համապատասխանեցնելով նաև կարգերն ու կանոնակարգերը:

8. Համալսարանի գույքագրման և դուրս գրման գործընթացի վերաբերյալ.

Հանձնարարել տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Զաքոյանին սեղմ ժամկետներում ավարտել համալսարանի ստորաբաժանումներում առկա օգտագործման համար պիտանի, սակայն չօգտագործվող, այլ ստորաբաժանումներին անհրաժեշտ գույքի, սարքավորումների, ապակե տարաների վերաբաշխումն և օգտագործումն ըստ նշանակության կամ տեղափոխել հատուկ պահպանման վայրեր, իսկ ոչ պիտանի գույքը դուրս գրել՝ օտարման ընդունված կարգի համաձայն:

9. ՀԱԱՀ ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի ավտոտրակտորների և գյուղատնտեսական մեքենաների ամբիոնի ասպիրանտ Հենրիկ Վարդանի Վարդանյանի տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցող «Գազել ընտանիքի միկրոավտոբուսի արգելակային համակարգի հուսալիության գնահատումը մեքենամասերի ռեսուրսային ցուցանիշներով» թեմայով թեկնածուական ատենախոսության հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի ավտոտրակտորների և գյուղ. մեքենաների ամբիոնի ասպիրանտ Հենրիկ Վարդանի Վարդանյանի Ե.05.01 - «Ավտոմեքենաներ և տրակտորներ» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցող «Գազել ընտանիքի միկրոավտոբուսի

արգելակային համակարգի հուսալիության գնահատումը մեքենամասերի ռեսուրսային ցուցանիշներով» թեմայով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

10. ՀԱԱՀ ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի Ագրարային էկոնոմիկայի ամբիոնի հայցորդ Դավիթ Ալեքսանի Հովհաննիսյանի Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան հայցող «Մրցակցային միջավայրը և դրա կարգավորման ուղիները Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտում» թեմայով թեկնածուական ատենախոսության հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի Ագրարային էկոնոմիկայի ամբիոնի հայցորդ Դավիթ Ալեքսանի Հովհաննիսյանի Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան հայցող «Մրցակցային միջավայրը և դրա կարգավորման ուղիները Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

11. ՀԱԱՀ պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոնի ասպիրանտ Քրիստինե Սարգսի Խանամիրյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ.

11.1. Քրիստինե Սարգսի Խանամիրյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել հետևյալ ձևակերպումով «Շաքարի բնական փոխարինիչների կիրառմամբ ֆունկցիոնալ նշանակության հացաբուլկեղենի և ալրային հրուշակեղենի տեխնոլոգիաների մշակում», Ե.18.01 - «Բուսական և կենդանական ծագման մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությամբ:

11.2. Գիտական ղեկավար հաստատել տեխնիկական գիտությունների թեկնածու Ա.Ի. Նազարյանին:

12. ՀԱԱՀ պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոնի ասպիրանտ Ազնեսա Գարուշի Սամվելյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ.

12.1. Ազնեսա Գարուշի Սամվելյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել հետևյալ ձևակերպումով «Հայկական գինիների պատրաստման տեխնոլոգիաների կատարելագործումը», Ե.18.01 - «Բուսական և կենդանական ծագման

մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությամբ:

12.2. Գիտական ղեկավար հաստատել տեխնիկական գիտությունների դոկտոր Կ.Ն. Կազումյանին:

13. Գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Ծպնեցյանի հաղորդումը ՀԱԱՀ ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի ջրային ռեսուրսների կառավարման ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Երեմ Հազարապետի Բաղդասարյանի Զ.01.01. – «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցող ատենախոսության թեմայի վերնագրի փոփոխության հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի ջրային ռեսուրսների կառավարման ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Երեմ Հազարապետի Բաղդասարյանի թեկնածուական ատենախոսության թեման վերահաստատել հետևյալ ձևակերպմամբ. «Զրամբարային հիդրոհանգույցի տեխնիկա-տնտեսական ցուցանիշների արդյունավետության բարձրացման ուղիները Տոլոբսի ջրամբարի օրինակով», Զ.01.01. – «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ:

14. ՀԱԱՀ Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի ավտոտրակտորների և գյուղատնտեսական մեքենաների ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Էդուարդ Գրիշայի Աֆյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ.

14.1. Հաստատել ՀԱԱՀ Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի ավտոտրակտորների և գյուղատնտեսական մեքենաների ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Էդուարդ Գրիշայի Աֆյանի ատենախոսական աշխատանքի թեման «Գազաբալոնային ավտոմոբիլի շարժիչի շահագործական բնութագրերի բարելավում գազաօդային լիցքի կարգավորման միջոցով» վերնագրով՝ Ե.05.01 - «Ավտոմեքենաներ և տրակտորներ» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

3.2. Գիտական ղեկավար հաստատել տեխ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Նորիկ Ավետիսի Բազիկյանին:

ՆԱԽԱԳԱՀ՝



Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏ. ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ